

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԳԻ ՀԻՄՆԱՀԱՐՑՅԵՐՆ ՈՒ
ԳՐԱՆՑ ԼՈՒՄՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՏՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Յ. ԱՍԱՏՐՅԱՆ, Գ. Ս. ԳՈՅՈՒՆՅԱՆ

Այսօր Հայաստանի բանկային համակարգի առջև ծառայել են որոշ հիմնահարցեր, որոնց պատճառով առևտրային բանկերը ի վիճակի չեն ամբողջությամբ բավարարելու տնտեսության ֆինանսական միջոցների պահանջարկը և տնտեսությունը ապահովել անհրաժեշտ վարկային ռեսուրսներով, որի հետևանքով տուժում է երկրի տնտեսության ապաքինման գործընթացը:

Ազատ շուկայական տնտեսության պայմաններում բանկերի առաջնային դերը ֆինանսական հավելյալ միջոցներ ունեցող միավորների և այդ միջոցների կարիքն ունեցողների միջև կապի հաստատումն է: Իրենց առաջնային դերը կատարելիս ֆինանսական այս միջնորդ հաստատությունները հավաքագրում են տնտեսության մեջ կուտակված ազատ ֆինանսական միջոցները, որոնց մի մասը բաշխում են ներդրումների կարիք ունեցող տնտեսության ամենատարբեր ճյուղերին, իսկ մյուս մասը՝ ուղղում սպառողական կարիքների բավարարմանը: Ուստի, բանկային համակարգը կարելի է համարել ցանկացած տնտեսության կարևորագույն հենարաններից մեկը, քանի որ բանկերն այն խողովակներն են, որոնց միջոցով երկրում կենտրոնացված խնայողությունները «դրամակույն բաղմապատկիչի էֆեկտ»-ով¹ ավելանալով՝ առաջացնում են մի քանի անգամ ավելի վարկային ռեսուրսներ, որոնք դառնում են տնտեսության ակտիվացման ու բարգավաճման հիմնական նախադրյալներ:

Խորհրդային Միության տարիներին ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ Հայաստանի բանկային համակարգը խիստ կրավորական դեր էր խաղում: Պետության անմիջական գերատեսչության ներքո գործող բանկերը չէին մատուցում կապիտալիստական երկրների բանկերին բնորոշ ոչ միայն լայն, այլև անգամ իսկ սովանդական ծառայությունները: Սակայն վիճակը փոխվեց Խորհրդային Միության փլուզման տարիներին ու դրանց հաջորդած անցումային ժամանակաշրջանում: Օրբստօրե ակնհայտ էր դառնում բանկային համակարգի կարևորությունն ու նրա ակտիվ գործունեության անհրաժեշտությունը: Երկրի տնտեսության զարգացման գործում բանկային համակարգի դերն սկսեց կարևորվել հատկապես 1986—1991 թթ., երբ մանր ու միջին ձեռնարկությունների ազատականացման շնորհիվ նոր ձևավորված «կոոպերատիվներն» իրենց գործունեությունն արտաբերի ֆինանսավորմամբ ապահովելու համար լուրջ քայլեր կատարեցին վարկային միջոցներ գտնելու ուղղությամբ²:

Տնտեսության և հատկապես վարկային շուկայի պահանջները բավարա-

¹ Paul Anthony Samuelson, Economics, 14th edition, McGraw-Hill International Editions, New York, 1992.

² FACET BV, ABSC. Iinking Banks and SMEs, Yerevan, 1996.

րելու նպատակով բանկային համակարգն սկսեց վերափոխել իր գործունեությունը, որով սկիզբ առավ այդ համակարգի բարեփոխումների բարդ ու զրծվարին գործընթացը: Այդ ուղղությամբ կատարված առաջին լուրջ քայլը եղավ միութայն շորս խոշորագույն բանկերի (Արդշինբանկ, Բնակսոցբանկ, Ագրոարդբանկ, Արտոնտբանկ) ապապետականացումն ու մի շարք կոմերցիոն բանկերի ձևավորումը:

Ինքնին հասկանալի է, որ բանկային համակարգի բարեփոխումների ըսկըսված գործընթացից անմասն չմնաց նաև Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը: Սակայն շուտով պարզ դարձավ, որ բանկային համակարգի արմատական բարեփոխման ու լիարժեք գործունեության համար չկան համապատասխան պայմաններ, մինչդեռ անհամեմատ շատ են դժվարություններն ու խոշընդոտները, որոնցից պետք է նշել հատկապես համապատասխան իրավական դաշտի բացակայությունը, նոր պայմաններում բանկային գործունեության փորձի պակասը, այդ գործունեության անվերահսկելիությունը և այլն: Այդ ամենի արդյունքը եղավ այն, որ կարճ ժամանակ անց հանրապետության բանկային համակարգը հեղինակագրկվեց հասարակության աչքում, որով էլ ավելի դժվարացավ ու բարդացավ նրա գործունեությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ֆինանսական շուկան բարեփոխելու, տնտեսության առաջադրած Ֆինանսական պահանջմունքները բավարարելու և ըստ այդմ բանկային համակարգը բարեփոխելու, թեկուզև անհաջող գործընթացն, ունեցել է մի քանի փուլ, որոնցից հիմնականներն են՝

1. ԱՊՀ երկրներում ստեղծվեցին մի շարք «Ֆինանսական բուրգեր», որոնք աննախադեպ սղաճի պայմաններում ժողովրդին առաջարկում էին արագ արժեզրկվող դրամը վստահել իրենց՝ դրա դիմաց խոստանալով տնտեսապես շահմանավորված եկամուտներ: Նմանատիպ ընկերության վառ օրինակ էր ռուսական «ՄՄՄ»-ը, որն իր գործունեության առաջին ժամանակահատվածում կարողացավ խոստումնալից եկամուտներ ապահովել ավանդատուներին: Սակայն, երբ պարզ դարձավ, որ ներգրավված գումարներով ոչ մի լուրջ ներդրում չի կատարվել, այլ պարզապես նոր ներդրողների միջոցներով ընկերությունն ապահովել է միայն հոների եկամուտները, «բուրգը» քանդվեց և ներդրողները կորցրեցին իրենց գումարները:

2. Խորհրդային Միության փլուզման, անցումային շրջանին բնորոշ բարդությունների և ազգային արժույթի որդեգրման պատճառով 1991 թվականին անվճարունակ հայտարարվեց Հայխնայբանկը, որի հետևանքով սառեցվեցին ու արժեզրկվեցին ժողովրդի տարիների ընթացքում կուտակած խնայողությունները: Դրան հաջորդած առևտրային բանկերի խիստ անհաջող մեկնարկը առաջ բերեց «խաբված ավանդատուների» մի ամբողջ բանակ, որով վերջնականապես կորավ հասարակության լայն խավելի վստահությունը Հայաստանի բանկային համակարգի նկատմամբ:

Քանի որ ներկայումս տիրող տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով տեղափան խնայողությունները գտնվում են շատ ցածր մակարդակի վրա, իսկ եղած խնայողություններն էլ կորսված վստահության հետևանքով չեն մտնում բանկեր, զգայվում է վարկային ռեսուրսների, մասնավորապես, միջին ու երկարաժամկետ վարկային ռեսուրսների զգալի պակաս: Ավանդատուները փաստորեն, չեն վստահում բանկերին, որով վերջիններս զրկվում են հնարավոր ավանդատուների խնայողություններից: Բանկային համակարգի հանդեպ գոյություն ունեցող անվստահությունն արդյունք է ոչ

միայն «խարված ավանդատունների» հսկա զանգվածի առկայության, այլև հպնակապետությունում տիրող քաղաքական ու տնտեսական անորոշության: Նույն պատճառով բանկերն իրենց հերթին զգուշանալով տոկոսադրույթային բարձր դիսկոնտո պահում են համեմատաբար երկարաժամկետ վարկեր ընդունելուց: Բանկերին առնչվող այլ ֆինանսական դիսկոնտո կողմից երկրին բնորոշ բարձր քաղաքական, տնտեսական դիսկոնտո պայմաններում բացակայում են նաև օտարերկրյա ներդրումներն ու ֆինանսական միջոցները:

Հարկ է նշել, որ միայն կապիտալ միջոցների անբավարարվածությունը չէ, որ այսօր Հայաստանի բանկային համակարգը դարձնում է խոցելի: Ոչ պակաս խոչընդոտող հանգամանք է նաև բանկերի կառավարման փորձի պակասը, եթե շասենք ընդհանրապես բացակայությունը Հանրապետության բանկերի մեծ մասն իրենց վարկային պորտֆելում ունեն զգալի անհուսալի և ժամկետանց վարկեր, որոնք սպառնում են նրանց կապիտալի հուսալիությունը: Ավելին, բանկերի գործառնական ծախսերը չափազանց մեծ են տրամադրված միավոր վարկի մեջ: Չնայած դրան՝ բանկերը դեռևս ի վիճակի են շահույթ գրանցելու տրամադրված վարկերի համար գանձվող և ընդունված ավանդների համար վճարվող տոկոսադրույթների միջև եղած մեծ տարբերության (маржа-յի), պահպանվող բարձր տոկոսադրույթների, ինչպես նաև ոչ վարկային՝ հատկապես արժույթային, գործառնություններից ստացված հատույթի շնորհիվ: Դեռևս չկա լավ մշակված ու կանոնակարգված վարկային քաղաքականություն, որը հնարավորություն կտա նվազեցնել վարկային դիսկոնտո:

Ինչպես տեսնում ենք, ներկայումս Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի առջև ծառայած են տարաբնույթ բազմաթիվ հիմնահարցեր: Առանց այդ հարցերը լուծելու ըստ էության անհնար է ստեղծել վարկային անհրաժեշտ պաշարներ, մինչդեռ այսօր երկրում չափից ավելի մեծ է երկարաժամկետ ու համեմատաբար «էժան» ֆինանսական միջոցների պահանջարկը, որը բխում է հատկապես սեփականաշնորհված ձեռնարկությունների վերակառուցման ու վերագինման կարիքներից: Եթե հիշյալ հիմնահարցերը մոտ ապագայում իրենց լուծումը չգտնեն, ապա բանկերը ստիպված կլինեն սահմանափակվել կարճաժամկետ առևտրային վարկեր տրամադրելով: Այդ դեպքում դժվար թե մոտակա մի քանի տարիների ընթացքում հնարավոր լինի ապափրկել երկրի տնտեսության արդյունաբերական ոլորտը:

А. Ф. АСАТРЯН, Г. С. ГОЮНЯН—Современные проблемы банковской системы РА и необходимость их решения.—В условиях свободного рыночного хозяйства финансовая деятельность банков становится важным фактором экономики страны. Однако вследствие отсутствия в РА соответствующего правового и политического поля недостаточности опыта банковского дела возникло недоверие к нему. В статье обсуждаются разнообразные вопросы, делаются предложения относительно реорганизации и реформирования банковской системы РА.